ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԻ ՍԱՀՄԱՆԸ

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ս. Ա.

Կենսագրական վեպը գեղարվեստական արձակի ժանրային նորաստեղծ ձևերից է: Կարելի է ասել, որ XX դ. ծնունդ է և իր դասական արտահայտությամբ կապվում է ֆրանսիացի գրող Անդրե Մորուայի անվան հետ, որն ստեղծել է կենսագրական վեպի մի ամբողջ մատենաշար, այդ թվում՝ «Արիել կամ Շելլիի կյանքը», «Բայրոն», «Օլիմպիա կամ Վիկտոր Հյուգոյի կյանքը», «Երեք Դյուման», «Պրոմեթեոս կամ Բալզակի կյանքը» և այլն, որոնք արժանացել են համաշխարհային ճանաչման:

Գրողների ու պատմական գործիչների կենսագրության վիպականացման փորձեր կատարվել են նաև հայ գրականության մեջ: Կարելի է հիշատակել Մովսես Արազու «Իսրայել Օրի», Հովհ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» և «Բոգդան Սալթանով», Զարգանդ Դարյանի «Սայաթ-Նովա» և «Արծիվ Վասպուրականի», Ա. Արաքսմանյանի «Ազատությունն աքսորական» և այլ վեպ կենսապատումներ Աբովյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Ստեփան Շահումյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի մասին:

Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպը[1] մի քանի էական գծերով ընդլայնում է կենսագրական վեպի սահմանները, հատկապես պատմական ժամանակի աշխարհընկալմամբ և հոգևոր մթնոլորտի խոհափիլիսոփայական վերլուծումներով: Դա պայմանավորված է տասնամյակների այն փորձառությամբ, որ հեղինակը ձեռք է բերել Ռուբեն Սևակի կյանքի ու ստեղծագործության հետազոտությամբ: Վեպի ժամանակը XX դ. սկիզբն էր: Պոլսի Սիրքեջի կայարանից դեպի Եվրոպա էր մեկնում «Արևելյան ճեպընթացը»: Կառամատույցին եռուզեռվող ամբոխի մեջ կանգնած էր քսանամյա մի երիտասարդ: Հագին սև կոստյում էր, որ բավական հաճելի ընդգծում էր նրա ոչ բարձր, բայց կառուցիկ հասակը: Կարճ կտրած մազերը հետ էին սանրված, իսկ շրթունքին աչքի էր զարնում նոր գծագրվող բեղը, որը նրան ավելի շատ պատանի էր ներկայացնում, քան հասուն տղամարդ: Սիլիվրից Հովհաննես աղայի որդին էր՝ Ռուբեն Չիլինկիրյանը, որ ուսուցչի՝ Ռեթեոս Պերպերյանի խորհրդով մեկնում էր Եվրոպա՝ ուսումնառությունը շարունակելու: Նույն գնացքով Եվրոպա էր մեկնում նաև մի թուրք երիտասարդ՝ մեծահարուստ փաշայի մինուճար որդին՝ Քենանը: Ծանոթությունը պատահական էր, զրույցը՝ անսպասելի ու անկանխակալ: Վիպական սյուժեի զարգացման լիցքերը սկիզբ են առնում հայրենիքի ու նրա ապագայի մասին այս ակամա զրույցից: Թվում է, թե երկուսն էլ խոսում են նույն հայրենիքի մասին և երկուսն էլ խանդավառված պիտի լինեին իրենց հայրենիքի ապագայի հեռանկարով. «Գիտեք, հայրս շատ է սիրում հայերին, շատ բարձր է գնահատում... Հորս մոտ շատ հայ պաշտոնյաներ կան, և

---

[1] **Թոփչյան Ա.,** Եվ անգամ մահից հետո, Ե., 2005: Սույն գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում:

ինքը շատ գոհ է նրանցից,- ակամա հաճոյախոսում է փաշայի որդին,- Մեր ընտանիքի բժիշկն էլ հայ է... Հայրս միշտ ասում է, որ եթե մենք ուզում ենք մեր երկիրը զարգացնել, հայերին ավելի շատ տեղ պիտի տանք: Այսօրվա օսմանցիք երեկվանը չեն, մենք փոխվել ենք, շատ ենք փոխվել» (15):

«Իր հայրն էլ,- մտորում է Ռուբենը, - մասնավոր զրույցների ժամանակ ասում էր, թե թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ կան, անգամ նրանց մեջ, ովքեր մերձ են սուլթանին, որոնք իսկապես բարձր են գնահատում հայերին, սակայն չեն կարող շատ բան անել, քանզի պայմանները...»:

Ռուբենի մռայլ կանխազգացումներն ու տագնապը որոշակի հիմքեր ունեին, որը չի վրիպում հաճոյախոս թուրքի հայացքից: Պիտի նկատել, որ այս սյուժեն էական է վեպի գաղափարի բացահայտման տեսակետից և համապարփակ ընդգրկմամբ մի ամբողջական հայեցակարգ է բացահայտում ստեղծագործության հղացքում: Զրույցը շարունակվում է երկար, ու մինչ թուրքը խանդավառված էր իդեալական հայրենիքի լուսավոր ապագայով, տարերային մի զգացողություն Ռուբենի հոգում կասկած ու թերահավատություն է ծնում տակավին իշխանության չեկած երիտթուրքերի պատմական առաքելության նկատմամբ: Մռայլ հոռետեսության այդ տարերային զգացողությամբ էլ նրանք բաժանվում են իրարից, և ընդհատված սյուժեն շարունակվում է արդեն ամիսներ անց Լոզանում:

«Եվ անգամ մահից հետո» վեպը բաղկացած է երեք մասից, որոնք յուրատեսակ դրվագներ են գլխավոր հերոսի կենսագրական ժամանակի հոգևոր, ֆիզիկական ու մտավոր կազմավորման, անհատականության ու աշխարհայացքի ձևավորման ուղիների վերաբերյալ: Վիպական սյուժեն միջնորդվում է պատմության ժամանակագրի հիշատակարանային անցումներով, որոնք կապակցում են դեպքերի ընթացքը և մի ընդհանուր՝ համաշխարհային աշխարհաքաղաքական հենքի վրա գծագրում հերոսի կյանքն ու ճակատագիրը:

Վեպի առաջին մասը կրում է «Էրոսի և Թանատոսի միջև...» խորագիրը, և դիցաբանորեն այլաբանված այս հասկացությունը արտահայտում է ոչ միայն հերոսի հոգեբանական դրաման, այլև պատմական ժամանակի ընդհանուր ոգին: Իսկ ժամանակն իրոք տագնապալից էր ու օրհասական: Եվրոպան բզկտվում էր ազգային ու սոցիալական հակասություններից, մարդկանց մտքերին ուղղություն էր տալիս հեղափոխության ուրվականը: Յուրգեն Կլաուսի կերպարում մարմնավորված գերմանա-թուրքական հետախուզության դավադիր հայացքից չէին վրիպում նաև Հայ Հեղափոխական Դաշնակցության, «Դրոշակ» թերթի և «Ազատ միտք» կազմակերպության գործունեությունը, պատմական օրհասի ջղաձիգ մաքառումը, «թե դիվական մի մութ ուժ է գալիս՝ ծպտված, թաքուն, անդեմ ու անկերպարան, որը, սակայն, ուզած պահին կարող էր մտնել ամեն տեղ»:

Լոզանը քմահաճորեն է ընդունում պոլսահայ երիտասարդին՝ անակընկալ դիպվածներով ու տագնապներով վայրիվերելով անփորձ պատանու հանդիպումը քաղաքակիրթ աշխարհի նորահայտ բարքերին:

Տակավին չանջատված մանկության հուշերի ու հայրենի եզերքի տեսիլքներից՝ Ռուբենն իրեն գտնում է ուսանողական միջավայրում՝ տարբեր ազգերի, դավանանքների ու համոզմունքների մի խառնարան, որ ձևավորում, վերաձևում էր

մարդկանց գաղափարներն ու աշխարհայացքը՝ կյանքի, աշխարհի դրվածքի, սոցիալ-քաղաքական հարցադրումների վերաբերյալ: Նոր ընկերներ, բազմաթիվ հանդիպումներ, ծանր ու ուժասպառող ուսումնասիրություն՝ բժշկության դժվարագույն արվեստին տիրապետելու համար. ներքին մաքառումների ու ինքնագիտակցության ծանր մի ընթացք, ուր և կայանում է մտավորականի ինքնության, բանաստեղծի ու քաղաքացու նրա կերպարի ձևավորումը:

Թոփչյանն իր հերոսի կենսագրության ժամանակը իմաստավորում է պատմության անդրադարձերի զուգահեռում՝ ոչ միայն ուշադրություն դարձնելով կերպարի մտավոր-հոգեբանական վերլուծությանը, այլև համապարփակ ընդգրկմամբ պատմական ժամանակը բեկելով աշխարհաքաղաքական իրադարձությունների ու մարդկային հարաբերությունների խիստ լարված ու դրամատիկ անցումներով: Նա ձգտում է ճանաչել իրերի բնույթը, և սկզբում, գուցե և տարերայնորեն, կենցաղային դիպվածներում, հետո ավելի քան սթափ ու հաստատապես գիտակցում, թե փոքր ժողովուրդների համար որպիսի ողբերգություն են դիվանագիտական ստոր ու քսու խաղերը, և ինչ արժեք ունեն կործանվող մարդկային ճակատագրերը աշխարհաքաղաքական բաժանումների տիրույթում: Այս հանգույցում գրողը պատմափիլիսոփայական ճիշտ դիտակետի վրա է դնում Ռուբենի ու կեղծիքով ծանրացած աշխարհի հոգեբանական բախումը՝ վերստին սյուժեի ընթացքը կապակցելով Քենանի հետ նրա հանդիպումով. «Վատ լուրեր ունեմ Պոլսից...,- արդեն Լոզանում, երկար ամիսների ընդմիջումից հետո ասում է նա:- Հայրս ձերբակալված է և աքսորված: -Ո՞ր մեղքի համար:- Տարօրինակ եք դուք՝ հայերդ, մի՞թե չըսովորեցիք, որ մեր երկրում անմեղ լինելն արդեն մեղք է:- Մենք դա վաղուց գիտեինք, սպասում էինք, որ դուք համոզվեք» (93),- մտահոգ դիտում է Ռուբենը:

Քենանի առջև կիտված լրագրերից դժվար էր հասկանալ, թե իսկապես ինչի համար են Պոլսում տեղի ունեցել այդ ձերբակալությունները: Հեռավոր ակնարկ էր արվում ինչ-որ ենթադրվող դավադրության մասին, հատկապես նշվում էր, որ «հիվանդ մարդն» արդեն խոր ճգնաժամի մեջ է, որ այդ երկրին օդ ու ջրի պես բարեփոխումներ են պետք: Բարեփոխումնե՞ր՝ մեծ Թուրան ունենալու համիդյան զառանցանքով ծանրացած երկրում: Ռուբենի հոգում թանձրացող մռայլ հոռետեսության ու կասկածի հոգեբանական գիծը պահում է պատմական ճգնաժամի տարեգրությունը՝ ժամանակի ներքին մաքառումներն ուղղելով հայոց խաբված գոյության ու հավատի դառը հեգնանքին:

Էական է դիտել, թե գրողն ինչպես է վերստեղծում վիպական միջավայրը՝ ստեղծագործության հղացքը պահող փիլիսոփայական հոսքերում տարեգրելով ոչ միայն պատմական ժամանակագրությունը, այլև կերպարի մտավոր-հոգեբանական վերլուծությունը միջնորդելով կենսագրական անցումների ու վիպական ժամանակի փիլիսոփայական մեկնությամբ: Ուշագրավ է, որ գրողը այս հանգույցում Ռուբենի կերպարում հայտնաբերում է մինչ այդ նրան անհայտ զգացողություններ՝ կինը, կանացիության հրապույրը և խենթության հասնող հրայրքի բռնկումները: Բեթհովենյան երաժշտության կախարդող հնչյունների ազդեցության ներքո «ասես կապանքներ բացվեցին իր մեջ, արթնացան բարձր ու առնական զրգիռներ, որոնց գոյության մասին պատկերացում անգամ չուներ»: Հայտնությունը հոգեբա-

նորեն ներզգայելի է՝ «Կարծես ինձ տեսա առաջին անգամ»,- մտորում է Ռուբենը, մի նոր ու անծանոթ Ռուբեն: Ներհուն զգացողությունների այս մղումով է, որ նրա ներաշխարհն են ներխուժում Լիզետը և կոմսուհի Ալիսը, Լիզետը՝ չքնաղ, կանացի, բայց դաժանորեն դատապարտված անբուժելի հիվանդությամբ, Ալիսը՝ երազային, անքննելի, առինքնող՝ իբրև աստվածուհի ու հավերժորեն կին: Կարծես երջանկությունն իրական էր՝ սիրո առաջին թրթիռների ու մերկության հեթանոսական ընծայաբերման վայելքով: Բայց Լիզետի անակնկալ մահը փըշրում է երջանկության պատրանքն ու Ռուբենին թողնում փշրված երազանքների ափսոսանքը միայն: Իրականը Մահն է: Մութ: Դաժան: Անագորույն. «Այդ աղջիկը (կինը) երեկ սիրո կատարյալ մարմնավորում էր, իսկ հիմա մահն է, որ կա՝ իր ամենադժնի կերպարանքով: Ճակատագիրն ինչպիսի սոսկալի առաքելություն է տվել նրան՝ միաժամանակ մարմնավորել կեցության երկու բևեռները: Հազիվ էր հասցրել այդ աղջկա մեջ դիպչել մի բանի, որ սեր պիտի կոչվեր, դառնար կյանք, սակայն սիրո կերպարանքն աղավաղվել՝ հրաշագեղի տակից հայտնվել էր հրեշավորը... Բայց աղջիկն ինչո՞վ էր մեղավոր, արարիչն ինչու էր գեղեցիկը դրել սիրո և մահվան միջև» (81):

Հետո տեղի է ունենում առավել սարսափելին՝ կոմսուհու առեղծվածային մահը. ինչով էր մեղավոր և կամ ինչո՞ւ էր դատապարտված ազնվության այդ հրեշտակը, որ չցանկացավ իր հոգու մաքրությունն աղարտել կայսերական դիվանագիտության խարդավանքներով և ինքնասպանությամբ, ողբերգականորեն ավարտեց իր այնքան գեղեցիկ գոյությունը: Փլուզվում է աշխարհի ամբողջությունը, կործանվում են երազները. «Հայտնվում ենք Աստծու և սատանայի միջև,- դառնությամբ մտորում է Ռուբենը,- միայն թե կորցնում ենք Աստծուն և ավելի ենթարկվում սատանային» (142): Ժամանակն ու աշխարհը սուզվում են երազի մղձավանջային տեսիլներում: «Ո՞ւմ սպասավորն է գեղեցիկը, Էրոսի՞, թե Թանատոսի»,- անպատասխան հարցը բզկտում է հոգին, և նրա ցնորական պատասխանից կրկին ու կրկին հառնում է չարախինդ մահը «իր ամենադժնի կերպարանքով», «Մահ, որ անխուսափելիորեն հայտնվել է սիրո կողքին և անգամ նույնացել նրան», և տիրականորեն իշխում է աշխարհում: Իսկ ահասարսուռ այս մղձավանջին արձագանքում է կոմսուհու հարցականը միայն. «Ինչպե՞ս ես կարողանում այս դիվական աշխարհում բանաստեղծություն գրել» (142):

Վեպի երկրորդ մասը՝ «Եվրոպայի առևանգումը», այլաբանորեն հուշում է Ռուբենի ինքնահաղթահարման ներքին մաքառումը: Նա իր անձով Եվրոպա էր բերել իր ազգի երևույթը՝ խորապես գիտակցելով իր կոչման մեջ նրա քաղաքակրթական մակարդակի ստուգումը: Դա յուրատեսակ քննություն էր՝ սեփական եսի մեջ հայկական տեսակի ազնվական ոգու բացահայտումը: Ո՞վ է հայը, որտեղի՞ց է սկիզբ առնում նրա պատմությունը, և ո՞րն է նրա դերը քաղաքակիրթ աշխարհում. օտարներին կասկած հարուցող այս հարցերի ճշմարտությունը Ռուբենը հավաստում է մարդկային բարձր արժանապատվությամբ և կամքի համառ գործակցությամբ:

Լինելով անհանգիստ ու որոնող ոգի՝ Ռուբենն անհասկանալի մի խզում է նկատում իր ներաշխարհի ու արտաքին աշխարհի միջև, որ նրան թվում է զարմանալիորեն անկատար, տգեղ ու անբարո, և իր հոգու ու մտքի ներքին թրթիռներն ուղ-

ղում դեպի իդեալի հեռուները, ուր թերևս իրական է միայն ռոմանտիկական հաճույքը։

Վիպական սյուժեի ամբողջ ընթացքն ուղեկցվում է Ռուբենի մտորումներով, խորհրդածություններով, որ փիլիսոփայական ու մտավոր խոր նստվածքներ են տալիս ստեղծագործության հղումներին՝ շատ հաճախ առնչվելով սիրո, գեղեցկության, արվեստի ու գոյության իմաստի որոնումներին՝ ոգեղենության պատրանքներում փորձելով լուծել կյանքի հարատևության առեղծվածը։

Ռուբենի մտավոր հասունացման ու կյանքի ճանաչողության գործում ճակատագրական դեր է կատարում նրա հանդիպումը դոկտոր Ռուի հետ։ Խելացի ու լուսավորյալ, կյանքի փորձառությամբ իմաստուն դոկտոր Ռուն Ռուբենին հուշում է, թե ունայն են կրքերը, բնազդներն ու զգայությունների խաղը, ճշմարիտը միայն իրական կյանքն է ու անվերջ մաքառումը։ «Այս մարդը կարծես ճակատագիր լինի,- խորհում է Ռուբենը,- միանգամից բերում, մոտեցնում է այն վճիռներին, որոնք ենթագիտակցության մեջ նոր-նոր են սկսել խմորվել» (391)։ Իսկ ենթագիտակցության մեջ գործում էին ոչ միայն կամքի անհատական մղումը և ոչ միայն բանաստեղծը, այլև ոգու ազգային արթնացումը։ Այս տեսակետից գրավիչ էր նրա հանդիպումը Սիամանթոյի հետ՝ Լեյդենի թոքախտավորների բուժարանում։ Հանդիպումը խորհրդավոր էր։ Երկուստեք միմյանց ճանաչում էին բանաստեղծությամբ, և ուսանելի էր Սիամանթոյի օրինակը՝ «թե ապրելը ոչ թե մահվան քմահաճույքից, այլ մարդու կամքից է կախված», և այն համոզմունքը, որ «իրենց կյանքը միայն իրենց մասնավոր իրավունքը չէ... այլ ժողովրդին ապրեցնելու միջոց» (162)։

Հոգեբանական այս հանգույցում է, որ, երբ թվում էր, թե անկումը կատարյալ է, ճգնաժամը խոր ու անդառնալի, հանկարծ կարծես տեսիլքի մեջ առկայծում է անյութեղեն, երազային էակը, և տիեզերքն անդրադարձնում է հոգու անուրջի արձագանքը՝ «... ծով, մահ, սեր։ Զգալ միայն այն, ինչ հաճո է ինձ...»։ Սերը եկավ որպես ճակատագիր՝ անդիմադիր ու ներզգայելի. «Աղջիկը գեղեցիկ մազեր ուներ, հրաշալի ու երկար, երկա՛ր... ցորենագույն այդ սքանչելի ալիքները զսպելու համար ծոծրակի մոտ սպիտակ ժապավեն էր կապել, սակայն ոչ թիթեռնահանգույց, ինչպես (գիշերօթիկի) մյուս սանուհիները, և դրանով իսկ առանձնացել նրանցից։ Իսկ հեքիաթային աչքերը լուռ ու անմեղ գոռում էին։ Այո, այո, նա տեսավ աչքերը տարածության վրա, հստակ, ասես դիմացը կանգնած լիներ։ Հապա մարմինը, շարժուձևը... Ասես արքայադուստր լիներ։ Կուսական ամոթխածության հետ մեկտեղ, մի ողջամիտ իգականություն ուներ, որ հրապույրներ էր արձակում, կանչում, գրգռում, միաժամանակ, արտաքուստ մնալով զարմանալիորեն զուսպ ու առաքինի» (166)։

Բայց սերը, որ շնորհված էր վերուստ, անխտրական չէր երկրային կրքերի հանդեպ։ Եվրոպան իր նախապաշարմունքն ուներ, ու Կլաուսի «արիական» մեծափառությունը, դիվանագիտական շղարշով քողարկված, կրկին պետք է համոզեր հյուպատոսին, թե «ի՞նչ կմնա մեր ազգից, եթե թույլ տանք, որ բարբարոսներն այդպես հեշտությամբ մեր աղջիկներին առևանգեն» (177)։ Գերմանուհի էր՝ Յաննի Ապել, որ հենց առաջին հանդիպումից փոթորկում է Ռուբենի ներաշխարհը զգացմունքի անսովոր տագնապներով և սիրո անմնացորդ նվիրումով։ Յաննիի

կերպարը, գիշերօթիկի ասկետական ճգնակեցությամբ թելադրված, շուտով ձուլվում է երազանքի ու հափշտակության կարոտին՝ Ռուբենին մղելով դեպի վերերը, դեպի երազանքի հեռուները, որ դուրս էր աշխարհայինից ու սովորականից, առօրյա կրքերի անդիմադիր խաբկանքից: Ըստ էության, հենց այս ձգտումն է, որ պահում է սյուժեի ներքին լարումներն ու հոգեբանական հանգույցների լուծումը:

Յաննին աղջկական անաղարտ մաքրությամբ վերապրում է այդ ձրգտումն ու կարոտի թրթիռները և, առանց հոգեբանական դիմադիր անցումների ու տարընթացությունների, դեպքերի ընթացքը կապակցում ինքնաբերաբար: Սկզբում մեկ-երկու թաքուն, վախեցած հանդիպումներ, հետո Շամպիերին, խաչելությունը, աստղերից հալածյալ մութն ու իրենց սիրո, նվիրումի ու հավատարմության աղոթքի ծեսը. «Տղան զգուշորեն վերցրեց շալը նրա ուսերից և փռեց խոտի վրա: Լուսինն ասես միանգամից մերկացրեց աղջկա պարանոցը և հասուն կրծքերը, և նրանք երկուսով միաժամանակ, այս հրաշալի բնության մեջ, մարդկությունից հեռու, ճանաչեցին իսկական սերը» (222):

Ռուբեն-Յաննի հոգեբանական զուգահեռներում Թոփչյանը հասնում է խոր թափանցումների՝ ներաշխարհի զգացողությունները հղելով դեպի սիրո փիլիսոփայության առեղծվածը. «Մի՞թե սերը աշխատանք է, ամենօրյա ծանր ու դժվարին աշխատանք,- անվերջորեն շարունակվող մի խոհ հետապնդում է Ռուբենի մտքերի ընթացքը,- մի՞թե վերացում ու վայելք արտահայտող այս զգացմունքը կարող էր այդքան տքնանք ու պատասխանատվություն ենթադրել՝ սիրած էակին կյանքի արյունող փշերից հեռու պահելու համար» (315): Թեև այն, ինչ պարտադրում էր կյանքը, դժվար էր ուրիշ բառերով որակել, սակայն Ռուբենի սերը շուտով վերաճում է տիեզերական կեցության, զգացմունքից ու գիտակցությունից վեր, աննյութական, բայց շոշափելի - իրական արժեքի, որ նման է ստեղծագործության, ու պետք էր անվերջորեն ստեղծագործել այն մեղքի, զղջման սարսուռներով ու ապաշխարանքի մաքրությամբ. «Ինչո՞ւ սիրեցի քեզ: Ի՞նչ իրավունքով հափշտակեցի քո այնքան երիտասարդ ու այնքան հրեշտակային սիրտդ... Ի՞նչ իրավունքով տակնուվրա արի խաղաղ կյանքդդ, քնասույզ երազներդ, ապագայի հեշտագին հույսերով օրորվող սիրտդ, երիտասարդությամբ ու խնդությամբ լեցուն հոգիդ...» (361): Կասկածի, խռովքի ու ընդվզումի վերապրումներն, իհարկե, երբեմն-երբեմն որոշակի բեկում են առաջացնում Յաննի-Ռուբեն հարաբերության մեջ: «Ես ուզում եմ դերասանուհի դառնալ, մեծ դերասանուհի, որ աշխարհի բեմերը պիտի նվաճի»,- օրերից մի օր ասաց Յաննին՝ Ռուբենի ինքնաքննության դժվարին մաքառումը վայրիվերելով խանդի ու երկվության ցավագին նոպաներով: «Իսկ եթե Յաննին թատրոնը ընտրի, և այսպիսով կորցնի նրան վերջնականապես...» (316): Մի հիվանդագին կասկած սողոսկել էր հոգին ու հալածում էր անվերջորեն: Մի՞թե ինքը կկարողանա աշխարհին հայտնել այն անսահման սերն ու անմնացորդ նվիրումը, որ իրեն տրված էր Յաննիի հետ հանդիպումի առաջին օրվանից. «Մի՞թե ինքը նման չէ այն զորավարին, որը կարծում էր, թե փայլուն հաղթանակ է տարել, ... սակայն պարզվում է, որ ավերիչ մի ուժ անսպասելի մտել է թիկունքից և կործանարար հարվածներ է հասցնում, և արյունով նվաճված հաղթանակն ուր որ է կփոշիանա – կկորչի» (316): Գրողը վիպական սյուժեն ուղեկցում է հոգեբանական հետաքրքիր ու

դրամատիկ դիպվածներով, որոնք ամբողջացնում են հերոսի անհատականության ներքին մղումները: Ռուբենը գիտեր, գիտակցում էր, որ «ծանր, տաժանելի փորձության էր ենթարկվում ոչ միայն ինքը, այլև իր պաշտած արվեստի մուսան, նա, որին հանձնել էր իր միտքն ու հոգին և դարձել նրա խոնարհ սպասավորը: Եվ այդ մուսան, որին պարտական էր հազվագյուտ վերացումների համար, որը նրան փրկում էր մահաշունչ կյանքից, այժմ իր սերն էր խլլում, որպեսզի մեկով ավելացնի իր անհամար սպասավորների թիվը... Մուսաները խանդեցին իրեն, որ ինքը նրանցից զատ մեկ ուրիշին է սիրում» (319): Սակայն Յաննին, որ արարչական էր ավելի, իր զոհաբերությամբ վերստին ստեղծագործում է սիրո առասպելը. «Ամբողջ երջանկությունը չես կարող միանգամից ստանալ... պիտի պահպանես հիմնականը, և ես տեսա, որ առանց թատրոնի ծանր կլինի ապրել, շատ դժվար, բայց առանց մեր սիրո ես չեմ կարողանա ապրել...» (317): Խռովքի ներքին տագնապները մարում են փիլիսոփայական հաշտությամբ՝ սիրո անուրջները հղելով երազանքների հեռուն: Սակայն «Եվ անգամ մահից հետո» երկը սիրավեպ չէ, և նրա գլխավոր հերոսները «ռոմանային» սիրո դերակատարներ չեն բնավ: Անգամ Յաննին, որ սյուժեն գունավորում է իր սիրո առասպելով, իրադարձությունների ու մարդկային հարաբերությունների ընդհանուր հատվածներում ավելի լայն տեսադաշտի վրա է դիտում աշխարհի փիլիսոփայական իմացականությունը: Ինչ վերաբերում է Ռուբենին, ապա նա մշտապես իր էության մեջ կրում է անանձնական մի առաքելություն՝ ազգի, հայրենիքի և բանաստեղծության հավաքականությամբ: Իսկ աշխարհում 1914 թվականն էր: Ադանայի ջարդերը լոկ սկիզբն էին ավելի մեծ աղետի:

Օսմանյան Թուրքիայում թեև դեռ չէին սկսվել զանգվածային ձերբակալությունները, թեև նոր իշխանության եկած երիտթուրքերն ամենքին և ամենուր բարբառում էին հավասարության, ազատության ու եղբայրության պատգամը, սակայն մթնոլորտի մեջ թևածում էր մի չարագույժ սպասում, անանուն տագնապ, որ ողբերգական կանխազգացումով էր պարուրում Պոլսի ու գավառի հայությանը: «Սուլթան, թե երիտթուրքեր նույն բանն են... գիշատիչ գայլը երբեք խոտաճարակ չի դառնա: ...Նախնառաջ ինքներս մեզ պիտի համոզենք, որ մորթվելու համար չենք» (351),- մտորում է Ռուբենը ու մռայլ մի կանխազգացումով գիտակցում, որ թերևս արդեն ուշ էր դիմագրավել աղետը:

Մթին մի նախազգացում, անորոշ մի տագնապ Ռուբենին մղում էին դեպի հայրենիք, ծննդավայր: Այցը Պոլիս վերջնականապես ցրում է Ռուբենի պատրանքները նոր Թուրքիայի և երիտթուրքերի պատմական առաքելության վերաբերյալ: Հոգեբանական դրամատիկ լարվածությամբ, հերոսի կենսագրական պատումը Լոզանից մինչև երիտթուրքական Պոլիս զուգահեռվում է Օսմանյան կայսրության եղեռնագործությունների ու հայաջնջումի զարհուրելի պատմությանը՝ փաստերի ու դեպքերի գրեթե ժամանակագրական նկարագրությամբ: Եվ այս իմաստով վեպի երրորդ մասը՝ «Երթալ» խորագրով, ներկայացնում է ոչ այնքան հերոսի կենսագրության ժամանակը, որքան սարսափի ու արյան մեջ թաղված թուրքական իրականության իրապատումը: Իրադարձությունների այս անկառավարելի քաոսում Ռուբենը փորձում է ինչ-որ կապ հայտնաբերել, հասկանալ անբացատրելի դեպքերի շարժման ընթացքը: Սակայն նրա խոհերն ու մտորում-

ները հանգում են փիլիսոփայական մի անավարտության, առկախ մնում պատմության հոգեբանության անթափանց ոլորտներում:

Գուցե սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ գրողն իր հերոսի մտածումները չի բեկում գաղափարական կողմնորոշումների կամ պատմության տրամաբանությունը հասկանալու ճիգերում. «Խնդիրը միայն փրկվելը չէ, այլ ինչպես փրկվելը,- մտորում է Ռուբենը,- հարյուրավոր տարիներ վիզ ենք ծռել թուրքի առջև, հանդուրժել նրա բռնությունները, որպեսզի մեր մաշկը փրկենք և չենք նկատել, թե ինչպես դարձել ենք նրա ստրուկը...» (369): Իհարկե, սա բնավ չի ենթադրում, թե նա շրջանցում է դեպքերի ու իրադարձությունների շարժման ընթացքը. նրա անհանգիստ հոգում մշտապես փոթորկում է այն հարցը, թե ե՞րբ է կատարվել ճակատագրական վրիպումը, և հնարավո՞ր էր արդյոք կանխել այս ազգակործան ողբերգությունը: Չէ՞ որ թաքուն ու սարսափազդու մի ուրվական մշտապես հետամտել է այս ժողովրդին՝ նրա կյանքը պարուրելով չարագույժ տագնապի դավադիր ջղաձգումներով: «Ինչ-որ մի ձեռք քանդում է այս երկիրը,- խորհում է Ռուբենը,- փլուզումն անկասելի էր, բայց մի՞թե հնարավոր էր և ինչ պիտի անեին հայերը, որ չարեցին, որպեսզի կոտորած չլիներ»: Եվ քանի որ հարցադրումն ինքնին պատասխան չուներ, թունավոր նետի պես գալիս, մխրճվում էր սիրտը՝ դառնալով ուղեղը քրքրող համառ մորմոք: «Իսկ ինչ պիտի արած լիներ ինքը, որպեսզի կանխեր աղետը»: Եվ առհասարակ, ինչո՞ւ «ժամանակը կորցրել է իր երազանքը... և ժողովուրդները՝ մարդիկ... կյանքին ձգտելու փոխարեն, խելագար վազքով գնում են դեպի մահ...»: Ինքնին հետաքրքրական է, որ անգամ այս դրամատիկ հանգույցում Թոփչյանը բարոյաքննական դատաստանի առաջ չի դնում ժամանակն ու նրա գործիչներին: Նա պարզապես տարեգրում է այդ ժամանակը և քրմեր ու մարգարեներ չի վկայակոչում պատմության ճշմարտությունը վկայագրելու համար:

Զուսպ, հաճախ ժլատ տողերի արանքից հառնում է հազարավոր մահերի, բռնության ու կոտորածի, հայ մտավորականության ոչնչացման նենգամիտ ծրագրի համապատկերը՝ ամբողջացնելով «անիծյալ տարիների» դանթեական ողբերգության պատկերը: Գրողը սյուժեն կրկին կապակցում է Քենան - Ռուբենի հանդիպումով, և հոգեբանական այս գիծը պահում է պատմական ճգնաժամի տարեգրության ու կործանված հավատի պատմությունը.

«- Կարծում էիր այլևս չե՞ս տեսնի,- հարցնում է Ռուբենը՝ նկատելով իրեն Պոլսում կենդանի գտած Քենանի զարմանքն ու տարակուսանքը:

- Բոլոր հայ մեբուսներն են ձերբակալված, անգամ Զոհրապը՝ Թալեաթի մտերիմ բարեկամը... Բոլոր խմբագիրները, բարձրաստիճան հոգեվորականները, գրողները և անգամ բժիշկները... Այդ ավազակը, այդ գնչուն մեր երկիրը տանում է կործանման...

- Թալեա՞թը...

Պատասխանը լռությունն էր» (414):

Պոլսից արդեն աքսորել էին մտավորականներին, մայրաքաղաքի փողոցները վաղուց դատարկվել էին իր վաղեմի ընկեր-ծանոթներից, ու Ռուբենը ներքին մի ջղաձգումով փորձում էր հաղթահարել հոգեկան ճգնաժամի տագնապը՝ ինչո՞ւ

ոչ ինքը: Չի ուշանում նաև իր ժամանակը: «Մի՞թե անսպասելի էր այս ամենը: Ոչ, անսպասելի չէր: Նույնիսկ զարմացած էր, որ ուշանում է: Ու հիմա պատրաստ էր անցնելու այդ ճանապարհը» (404): Աքսո՛ր: Դեպի ուր, չգիտեր, հայտնի չէր: Առայժմ միայն դատապարտված էր քայլելու:

Միջնադարյան խավարում խարխափող վայրենի խուժանի վանդալային բնազդը Պոլսից մինչև Չանղրի սարսափելի մի ճանապարհ էր գծել, որի անդենական տառապանքների միջով էլ քայլում է Ռուբեն Սևակը: Գյուղ առ գյուղ, աքսորի ճանապարհի ողջ ընթացքով լսելի են դառնում կործանման սարսափի արձագանքները:

Այն, ինչին ընդունակ է բարբարոս վաչկատունը,- աքսորի ողջ ճանապարհին ցավով նկատում է Ռուբենը,- խարխափում է նախնադարյան հետամնացության ու քարանձավային բնազդի սահմաններում միայն. երկաթգծի երկայնքով կուչ եկած խուլ ու խեղճուկրակ գյուղեր, բութ, անասնական դեմքեր, պառաված, քոսոտ շների ոհմակներ, կիսամերկ թուրք լամուկների սովահար խմբեր: Բայց նախապաշարված ամբոխի անասնական բնազդը շարժման մեջ է դրվել դիվանագիտական խաբեությամբ՝ կրոնամոլ ամբոխի մթագնած խղճի ու բանականության գրգիռներում հորինելով արյունոտ նախճիրի սոսկալի տեսարաններ:

«Մի ձեռք քանդում է այս երկիրը»,- կրկին ու կրկին մտորում է Ռուբենը, և գրեթե նույն ժամանակ նույն զգացողությունն է վերապրում Յաննին: Իհարկե, երիտթուրքական Պոլսի հետ հենց առաջին հանդիպումից վերահաս աղետի ու տագնապի մի զգացողություն սողոսկեց Յաննիի սիրտը: Ատելի շատ բան կար այս երկրում, և նա ոչ մի կերպ չկարողացավ ընտելանալ այդ ատելությանը: Գուցե և ճշմարիտ էին կանխազգացումները, քանզի խիստ դրամատիկ հանգամանքներում շուտով տեղի է ունենում Յաննիի և ստի, կեղծիքի ու խաբեության մեջ սուզված թուրքական իրականության իսկական «հանդիպումը»: Հանդիպումներ, որոնք իրենց կնիքն են դնում իրադարձությունների հոգեբանական լուծումների վրա: Յաննին փորձում է կոնկրետ հանգամանքների մեջ բազմաթիվ հարցերի պատասխանները որոնել, սակայն կրկին ու կրկին բախվում է անողոք իրականությանը՝ ցավագնորեն վերապրելով հավատի փլուզման հոգեկան սուր տագնապները: Եվ այն, ինչ Յաննին չի կարողանում գուշակել մեծապետության դիվանագիտական խարդավանքներում, արդեն տեսանելի էր իրերի տրամաբանությամբ:

Ստի, կեղծիքի ու խաբեության մի ստոր խառնարան, ուր ի չիք են դառնում հույսի ապավեններն, ու կործանվում է մի ամբողջ ժողովուրդ: Անբարո ժամանակի շրջապտույտն իր մեջ է առնում Յաննիին, և գրողը պարզապես գաղափարական հղում է տալիս նրա հոգեկան մղձավանջին ու անօգնականության ջղաձգումներին: Շուտով վրա է հասնում հոգեբանական տեղատվությունը, և Յաննին պարզապես ատելության ու զզվանքի ընդվզումով դիմադարձ է լինում խաբեության ու կեղծիքի մեջ ընկղմված իր միջավայրին, իր իսկ երկրին: Սիրած էակին փրկելու ապարդյուն ճիգերը բեկում են նրա հավատը, և հոգեբանական լքվածության ցավագին մաքառումներում նրան մնում է մենակության, հուսախաբության ու ապարդյուն անցած երազների խոստովանությունը միայն: Եվ միակ հույսը, թե Ռուբենը կենդանի է Չանղր քաղաքում:

Չանղրը, ուր հանգրվանել է հայոց մտքի ու փառքի լուսավոր փաղանգը։ Ահա Տիրան Քելեկյանը՝ Պոլսի ազդեցիկ մտավորականներից մեկը, Վարուժանը՝ մեծ բանաստեղծը, մտածողն ու փիլիսոփան, Բյուզանդ Քեչյանը, դոկտոր Դինանյանը, պատանի Հակոբիկը՝ անձնապաստանության բնազդի թելադրանքո՞վ, թե՞ փրկության սուր ջղաձգումներով ուրացած պատանյակը, որ, այնուամենայնիվ, չի կարողանում հաղթահարել բարոյական մեղանչման ցավը, մարդիկ, որոնցից ամեն մեկը յուրովի է վերապրում խաթարված ճակատագրի ու անապավեն հույսի մղձավանջը։ Ու յուրաքանչյուրը հյուսում է իր պատմությունը՝ հոյակապ, վեհ, ողբերգական։

Թերևս այդ ողբերգության մեջ էր ազգափրկության մաքառումը, մանանեխի հատիկի մեծության Լույսի տեսլականը, որ ճշմարիտ էր դարձնում գոյության իմաստը և կյանքի հավերժության առեղծվածը։

Հենց այս զգացողությամբ է մահվանն ընդառաջ գնում և Ռուբեն Սևակը։ Վերջին տեսարանում առանձնապես ծանր են Ռուբենի հոգեբանական վերապրումները։ Գիտակցելով, որ վարանումի մի ակնթարթը (Այիշե՛ն) վերադարձի ճանապարհն է դեպի կյանք, նա հրաժեշտի ու մահվան մի հոյակապ լեգենդ է արարում՝ հեռացումի ցավագին զգացողություններում իրար հյուսելով երջանկությունը, ցավը, մահը. «Հայացքը մի փրկություն ուներ լոկ. երկինքը՝ անսահման կապույտ... Գլուխը հետ գցեց, որպեսզի միայն երկինքը տեսնի... և այդ պահին մի սուր ծակոց զգաց այնտեղ, ուր սիրտն է... Բանի տեղ չդրեց... Սրտի ծակոց վաղուց ուներ... Զգաց նաև, թե ինչպես կապանքներից ազատված սլանում էր դեպի երկինք... Եվ այդ ծակոցն անսպասելի սլացքի հրճվանքից էր գուցե և ոչ թե (թուրքի) դաշույնից, որ մինչև կոթը մխրճվեց սիրտը...» (589)։

Այստեղ ընդհատվում է պատմությունը՝ հուշի բեկորներում թողնելով ասպատակված մի երկիր, վաչկատունի բնազդին զոհ գնացած մի ժողովուրդ ու անավարտ մնացած մի գեղեցիկ կենսագրություն...։ Բայց պատմությունը շարունակվում է Յաննիի մտորումներում. «Ահ, Ռուբեն, պետք է սիրուց կառչենք, միայն նա կարող է պահել մեզ այս աշխարհում»։ Ու «մինչև կյանքի վերջը՝ 1967 թ. Դեկտեմբերի 27-ը, ամենայն արթնամտությամբ, հավատում էր, որ Ռուբենը ողջ է, և առասպելական հերոսուհիների հավատարմությամբ սպասում էր նրա վերադարձին։ Նա ճշմարիտ էր յուրովի, քանզի այն սերը, որ ստեղծեցին միասին, պիտի ապրեր անգամ նրանց մահից հետո...» (590)։

Կա գիտական իմացության մի սահման, որից սկիզբ է առնում աշխարհի գեղարվեստական ճանաչումը։ Այս սահմանի վրա է դիտված Ռուբեն Սևակի կյանքը Ալ.Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպում։ Գեղարվեստական տպավորիչ պատկերներում ուրվագծվում է բանաստեղծի անհատականությունը՝ աշխարհիկ զգացողությունների, մտավոր ու հոգևոր հետաքրքրությունների կազմավորումը քաղաքակիրթ Եվրոպայի մտավոր մակարդակներում, հայ հանճարի բացառիկ ստեղծագործությունը՝ գեղեցիկի ու կատարյալի ձգտմամբ և ազգային ճակատագրի ողբերգական վախճանով։ Վեպը ճանաչման հաճույք է պատճառում մտավոր-գրական կուլտուրայով, եվրոպական նիստուկացի իմացությամբ և

ժամանակի համաշխարհային-պատմական իրադարձությունների խոհափիլիսոփայական ընկալումներով:

ГРАНИ БИОГРАФИЧЕСКОГО РОМАНА

МАРКАРЯН С. А.

Резюме

В романе Ал. Топчяна “И даже после смерти” вырисовываются грани творческой индивидуальности ставшего жертвой геноцида известного армянского поэта Рубена Севака, произведения которого проникнуты устремленностью к прекрасному и совершенному. Роман являет собой переплетение фактов биографии и творчества поэта, которые, взаимодополняя друг друга, обуславливают высокую познавательную ценность романа Ал. Топчяна.